սական դարերում Ուտիացոց աշխարհի կռատունը է եղել *)։ Ցեռոյ, առաջին դարի սկզբում, ս. Եղիշէ առաքեալը կործանել է այդտեղի մեհեաններն ու կռատունները և նրանց տեղը կանգնեցրել է խաչ քարեր, որ մինչև ցարդ հայերի և թուրքերի համար շատ մեծ ուխտատեղի է համարւում և այդ տեղը այժմս կոչւում է «Թավուխ կրան»—որ նշանակում է հաւեղէնների զենարան՝ մատաղ մորթելու տեղ։ Տեղական ժողովուրդը շատ մեծ յարգանքով և խորին պատկառանքով է վերաբերւում դէպի այդ սրբավայրի հսկայ ծառերը և ոչ ոք չէ համարձակւում մի որևէ ճիւղ կտրել նրանցից։ Ահաւասիկ ձեզ հնագիտական ուսումնասիրութեան համար առատ ու ընտիր նիւթեր։

Ի

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔԵՐ ՈՒՏԻԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ

Ինչպէս ասացի, ամբողջ Ուտիացոց աշխարհի բազմաթիւ գիւղերի մէջ մինչև ցարդ գործածական և անկորուստ է մնացել Ուտիերէն լեզուն միմիայն Վարդաշէն և Նիժ գիւղաքաղաքներում, որոնց բառերի և խօսակցութեան ոճի մէջ մի փոքր տարբերութիւն կայ։ Հայ և օտար մասնագէտ լեզուաբան և պատմաբան բանասէրների

*) Տես «Ճանապարհ. ի Մեծն Հայաստան» երես 381.